ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

**ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---


գ. Նիզամի
☎Հեռ.(0236) 4-34-42


« 11 » օգոստոս 2014թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Նո 08

ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ_ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով “ Տեղական ինքնակառավարման մասին”հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2 կետի

Ավագանին Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2014-2018թթ ծրագիրը,համաձայն 1 հավելվածի:

Ավագանու անդամներ Ի. Հարությունյան
Վ.Դունոյան
Ա.Մարգարյան

Նիզամի համայնքի ղեկավար Հ. Կարապետյան

Հավելված 1
Հաստատված է Նիզամի
ավագանու 11 օգոստոս 2014թ
թիվ 08 որոշմամբ

# *Արարատի մարզի Նիզամի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր 2014-2018թթ*

1. Համայնքի իրավիճակի գնահատում

Աշխարհագրական դիրքը և համառոտ պատմական ակնարկ.

Արարատի մարզի Նիզամի համայնքը նախկինում Մասիսի շրջանի Վերին Նեջրլուի անվան սովխոզ ադրբեջանաբնակ գյուղն է:

1988թ-ին այն վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով:

Մարզկենտրոնից՝ Արտաշատից 25կմ Մասիսի քաղաքից 7կմ և մայրաքաղաք Երևանից 27կմ հեռավորության վրա:

Կլիման համապատասխանում է Արարատյան դաշտավայրի մյուս գյուղերի կլիմային, շոգ ամառ,ոչ սաստիկ ձմեռ,հիմնականում չորային:

## *Ժողովրդագրություն*

Համայնքի բնակիչների թիվը-1356
Այդ թվում՝
Տղամարդիկ-669
կանայք_ 687
Թոշակառուներ- 203
Փախստականներ- 12
միակողմանի ծնողազուրկ երեխաներ- 4
երկկողմանի ծնողազուրկ երեխաներ-0
հաշվանդամներ-42
նպաստառուներ-50 ընտանիք
զոհվածների ընտանիք- 4
Աշխատունակ բնակչության թիվը-976

## *Տեղական ինքնակառավարման մարմիններ*

Համայնքը ղեկավարվում է համայնքապետարանի կողմից և ունի հետևյալ կառուցվածքը.
համայնքի ղեկավար –
համայնքի ղեկավարի տեղակալ-
Աշխատակազմի քարտուղար-

գլխավոր մասնագետ-
առաջատար մասնագետ-
1-ին կարգի մասնագետ-
գրադարանի վարիչ
Կուլտուրայի տան տնօրեն
Պահակ
հավաքարար
Համայնքի ավագանին ներկայացված է 5 անդամով:Համայնքի տարածքում ոչ-մի ձեռնարկություն չի գործում և չկան այդպիսիներ:

## *Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը.*

Համայնքի սեփականության գույքը գտվում է բարվոք վիճակում:

## *Բնակարանային տնտեսություն*

Համայնքի բնակֆոնդը կազմում է , 39907,34 ք.մ ,որի 100 տոկոսը մասնավոր է:

## *Հող օգտագործում*

Համայնքի վարչական տարածքըկազմում է 274հա,
որից՝
վարելահող- 178
արոտավայր-
հողի սեփականաշնորհմանը մասնակիցների ընտանիքների թիվը-329
մեկ հողաբաժինը 0,25 հա
համայնքի սեփականություն հողեր-44,8

## *Գյուղատնտեսություն*

Համայնքի գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են ՝
դաշտավարություն
անասնապահություն
գյուղատնտեսության բնագավառում բնակչության զբաղեցրած 70 տոկոս
Համայնքը ունի 129. գլուխ խոշոր և 26 գլուխ մանր եղջերավոր անասուներ.
արտադրվում են հիմնականում հետևյալ գյուղ մթերքները՝
բանջարեղեն /լոլիկ, բիբար, բադիրջան և այլն/
ցորեն, գարի-
առվույտ-
դաշտամիջյան ճանապարհների վիճակը անբավարար է

համայնքի վարելահողերից ոռոգելի են-130հա

## *Շրջակա միջավայրի պահպանություն*

Համայնքը չունի խմելու ջուրը

ջրամատակարարումը իրականացվում պոմպով արտեզյան հորերից, որոնց ջրատվությունը խիստ նվազել է:
ջրի որակը չի համապատասխանում խմելու ջրի սահմանված նորմերին.
կանաչապատ տարածք չկա:

## *Կրթություն*

Մսուր մանկապարտեզ չի գործում
ընդհանուր միջնակարգ դպրոցների թիվը մեկ
միջնակարգ դպրոցը վերանորոգելման խիստ կարիք ունի, հաճախում են 116 աշակերտ, աշխատում 27 հոգի:
Համայնքում գործում է նախակրթարան
Հաճախում է 20 երեխա

## *Մշակույթ և սպորտ*

Մշակույթի բնագավառում համայնքում գործում է `
գրադարան-1 անբավարար շենքային պայմաններում
,հաճախում են 41 երեխա և ունի մեկ աշխատող:
Մշակույթի տուն –մեկ շենքային պայմանները անբավարար են :

## *Առողջապահություն*

Համայնքում գործում է`
բուժկետ-1
բուժ.աշխատողների թիվը-2

## *Տնտեսական /արդյունաբերական,առևտոր և սպասարկում/*

Համայնքի զբաղվածության ուղղությունը այսօր գյուղատնտեսությունն է, գյուղացիական տնտեսությունների ձևով:
Համայնքում գործում է առևտրի 2 օբյեկտ / անհատ ձեռներեց ,որոնցում զբաղված են 2 մարդ/
հանրային սննդի օբյեկտ –1 հատ
գազալցակայան-1հատ

## *Հանգստի գոտիներ, զբոսայգի, խաղահրապարակներ բաց գոտիներ:*

Համայնքում բացակայում է հանգստի ցանկացած գոտի:

## *Համայնքի ուժեղ կողմերը և աշխարհագրական դիրքը:*

Համայնքի ուժեղ կողմերն են, նրա աշխարհագրական դիրքը ՝ մոտիկությունը մայրուղիներից, շրջկենտրոններից ոչ հեռու գտնվելը, նրանց մշտական կապերը առկայությունը և Մասիս ե/գ կայարանից ոչ հեռու գտնվելը:
Համայնքում գործում է գյուղական հեռախոսացանցը և համարյա ընդունում է ՀՀ տարածքում հեռարցակվող բոլոր հեռուստաընկերությունները:
Համայնքը ունի բարձրակարգ ոռոգվող վարելահող 2-րդ , 3-րդ կարգի:

## *Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները*

Համայնքը դարձնել բարեկարգ
Բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները
Համայնքը դարձնել տարածաշրջանի գյուղատնտեսական խոշոր կենտրոն՝ բանջարեղենի և անասնակերի արդյունաբերության ոլորտում Համայնքը դարձնել բարեկարգ
Բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները
բանջարեղենի և անասնակերի արդյունաբերության ոլորտում:

## *Առաջիկա 4 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝*

Խմելու ջրի ցանցի վերականգնում
Ոռոգման համակարգի վերականգնում և ընդլայնում
Ներ համայնքային ճանապարհների և փողոցների բարելավում,
1-6-րդ փողոցների լուսավորության անցկացնում
Նոր թաղամասում գազաֆիկացման համար նախագծի հանելու և գազաֆիկացնելու:
Նոր գերեզմանատեղ հատկացնելու և հատակագիծ կազմելու
Կուլտուրայի տան մասնակի վերանորոգում
Կենտրոնական փողոցի ասֆալտապատում
Վարչական շենքի վերանորոգում

## *Համայնքի թույլ կողմերը*

Ոռոգման համակարգի առաջնահերթ վերանորոգման անհրաժեշտությունը
Բնակչության ծայրահեղ աղքատությունը-55 տոկոս
Սոցիալապես անապահով բնակչության տոկոսը-60Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը
Նորմալ կենցաղային պայմանների բացակայությունը

## *Համայնքին վտանգ սպառնող փոփոխությունները*

Բնակչության 30 տոկոսը չի կատարում իր հարկային պարտականությունները
Խմելու ջրի ներհամայնքային ցանցի մաշվածությունը:
Ոռոգման ներքին ցանցի մաշվածությունը և ընդհանրապես բացակայությունը որոշ հողատարածքներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
**ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

գ. Նիզամի
☎Հեռ.(0236)

« 11» օգոստոսի 2014 թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 09

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ և ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ և ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով "Համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 13 հոդվածի 2-րդ մասով

Ավագանին ՈՐՈՇԵՑ

Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել երկու ավագանու անդամ՝ Արմեն Մարգարյան, Վահե Դունոյան:

Ավագանու անդամներ՝ Ի. Հարությունյան
Վ.Դունոյան
Ա.Մարգարյան

Համայնքի ղեկավար Հ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

# ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նիզամի « 11» Օգոստոս 2014 թ.

☎Հեռ.(0236)

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 10

## 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի

Ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

01.6.1 / ընդհանուր բնույթի հանրային ծառայություն/ 4823 հոդվածից պակասացնել 30,0 հա դրամ,4819 հոդվածից 40000 ՀՀ դրամ և 09.1.1 4267 հոդվածից 400000 և ավելացնել 01.6.1 4241 հոդվածին 70000 հազ. դրամ և 4235 հոդվածին 400000 դրամ:

Ավագանու անդամներ՝ Ի. Հարությունյան

Վ.Դունոյան

Ա.Մարգարյան

Համայնքի ղեկավար Հ. Կարապետյան